

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 5 կոպէկով:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և սոս օրերէն):

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ:

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

(Օտարաբարբառացիք դիմում են ուղղակի  
Тифлис. Редакция „Мшакъ“

Հայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

## „ՄՇԱԿ“

### ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թւին

ՀՐԵՏԵՐԵԿՎՈՒՄ Է՝ ԵՄԵՆ ՕՐ, բացի սոն և սոնների հե-  
տևեալ օրերէն:

Լրագրի գինը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵԳՐՈՒՄՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻՆՆԵ ԽՐԵՑԻՐԵՏԵՆ մէջ:

ԵՄԵՆՉԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցեով ТИФ-ЛИСЬ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՒ

#### ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Պրօգրամմայի խնդիր.— Ներքին տեսու-  
թիւնը Նամակ Մտակվայից, Նամակ խմբագրին,  
Ներքին լուրեր.— Արտաքին տեսու-  
թիւնը, Նախապարտութիւններ.— Բանասիրա-  
կան: Հանապարհորդական նկատողութիւններ:

#### ՊՐՕԳՐԱՄԱՅԻ ԽՆԴԻՐ

IV

Խրաքանչիւր ազգի մէջ կնոջ  
ընտանեկան և հասարակական դը-

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեկտեմբերի 15-ին ես դեռ թափառում էի Ղար-  
սի նեղ, խուլ, օձապտոյտ և կեղտոտ փողոցներում:  
Թէև վաճառականութիւնը բոլորովին ընկած է,  
բայց օրըստօրէ նոր նոր վաճառականների թիւը  
դարձեալ աւելանում է: Թանգութիւնը հասել է  
իր վերջին կէտին. ապրուստը շատերի համար սև  
աղուէս է դառել. բոլորը քաղցած, ապրանքները  
կռների տակ գեղեր գերեկ ալիւր են որոնում:  
Բայց իզուր, ալիւրը ձիւտ է դառել, ոչ ոք նրա  
տակից չէ հանում: Երբեք մօտենում է, ինչ  
պիտի ուտենք, ինչ պիտի ցանենք... հառաչելով  
կրկնում են դարձեցիք և նրա շրջակայ գիւղացիք:  
Մի խօսքով թանգութիւնը Ղարսի շրջակայքից  
հայածել է կենդանութիւն, ցնծութիւն, ուրախու-  
թիւն, ամենքն էլ մի կտոր չոր հացի վրա են մը-  
տածում: Այնչ նոր ու նախանձելի երևոյթ չը կայ  
այստեղ. նրկեռ դարձրեցրը կամաց կամաց  
քայլափոխում են: Մի դաստանից քաղկացած  
Շուշանիկեան օրերդական դարձրեց մասին հետե-  
ւեալ նկատողութիւններն են աչքի ընկնում. նախ  
72 աշակերտուհի այդպիսի մի փոքր սենեակում  
սեղմված տեղաւորելով թէ հակամանկավարժական  
է և թէ հակաառողջապահական, մանաւանդ զը-  
րութիւնների ժամանակ ոչինչ կարգապահութիւն  
չէ կարելի պահել: Երկրորդ վնասակար է և այն,  
որ 7 տարեկան երեխան իրանից երկու անգամ  
մեծի հետ դասակցութիւն է կազմում և հետևա-  
բար չը կարողանալով իր ուժեղ ընկերի հետ  
ճանապարհորդել, ուժից ընկնում, թուլանում ու  
կէս ճանապարհի վրա է մնում: Այս մասին թող լաւ  
մտածէ ուսուցչական խումբը հոգաբարձական խում-  
բի հետ, որոնք ժողովներ կազմելու և մանկա-  
վարժական զանազան կարևոր հարցերի վրա խօսե-

լու տարաբախտաբար աւելորդ ժամանակ չունեն:  
Հոգաբարձուների դարձրեցրի դժուար թանգ  
անցկենալու մասին ոչինչ չէ կարելի ասել, քանի  
որ այս ցաւալի երևոյթը աւելի մեծ քաղաքներում  
էլ է երևում:— Գուրս եկայ Ղարսից՝ բերելով ինձ  
հետ շատ ցաւալի տղաւորութիւններ:  
Նոյն ամսի 17-ին մտայ Ալէքսանդրապոլ: Ի՞նչ  
տեսայ. դողութիւն, լրտութիւն, շատ յաճախ քե-  
թակարանութիւն, ամեն բոլոր անամոթ բառե-  
րով հայտնայեցրեցր ու կծու կծու յիշոցներ: Այս  
տարվայ անտեսանելի թանգութիւնն էլ չը կար-  
ողացաւ սանձահարել Ալէքսանդրապոլի սասնակ,  
անզոր, անամոթ չափաւորներին, էլ ուրիշ ինչ  
հետ մնաց, բացի խօլերայից, Այս, միայն խօլե-  
րայի սուր մանգաղը կարող է այս զուտ հայկա-  
կան քաղաքը մաքրել յիշեալ սրկաներից:— Ար-  
ջին ժամանակ Ալէքսանդրապոլ մտան և բ կ ու  
ս ու թ գ թ ի չ ն ե թ (պ. պ. Պատկանեանց և Բար-  
խուղարեանց): Տեսնելը ինչպէս պիտի նկարագրեն  
Ալէքսանդրապոլի բարոյական կողմը:  
Ժամը 8-ից քաղաքը անց էր, որ ես մտայ Հո-  
գեր դարձրեցի բակը, որտեղ մօտաւորապէս խա-  
ղում էին 300-ի չափ երեխաներ: Ես չը դիտեմ,  
զուցէ այդ երեխաները իրանց սովորած բոլոր ա-  
ռարկաների մէջ շատ յառաջադէմ էին, բայց քա-  
ղաքավարութեան, համեստութեան մէջ շատ ու  
շատ յետ էին. այդ ես եղբակցերի նրանց թէ  
խաղաղուց, թէ անյիշելի բառերով և բարձր ձայ-  
նով միմեանց անխնայ հայտնուց: Իսկ ինչ վե-  
րաբերում էր նրանց գոռում գոչումին, սարսա-  
փիլի էր, կատարեալ պատերազմ: Զանգակը լսի-  
ցին. տեսնել էր հարկաւոր թէ ինչպէս, զնա,  
ընա, իրար գլխի թափվելով ներս թափվեցին դա-  
ստաներում և շարունակեցին մը և նոյն ազմուկը  
մինչև վարժապետների ներս մտնելը:  
19-ին դուրս եկայ Ալէքսանդրապոլից, անցայ  
Ղանախ-Ղան, Զաջուա, Աղրուլաղ, Նալբանդի  
և Ղչլաղ, որոնք բոլորը միամտան տգէտ ու երկ-  
բազոր ժողովուրդներ են և որոնք իրանց կեան-  
քում դպրոցի հոսն էլ չեն աւել: Արդեօք վիճա-  
կաւոր առաջնորդը այցելել է այս թշուառ գիւ-  
ղերին, հասկացրել է կրթութեան նշանակութիւնը,  
յորդորել է դպրոց բանալու համար... Թէ միայն իր

րութիւնը կազմել է այն պատ-  
մական շրջանների և պայմանների  
համեմատ, որ ունեցել է և ան-  
ցել այդ ազգը: Հայ կնոջ դրու-  
թիւնն էլ առաջ է եկել նոյն բը-  
նական կերպով:  
Հայ կինը, ամենախոր հու-  
թիւնից սկսած մինչև մեր ժա-  
մանակները, որոշվել է իր խիստ  
աշխատասէր և գործունեայ բնա-  
ւորութեամբ, վանտորոյ նա եղել  
է այն գլխաւոր գործիչը, որը  
պահպանել է ոչ միայն ազգի բու-  
րոյական, այլ և նորա նիւթական  
բարօրութիւնը: Այսպէս զորօրի-  
նակ, եթէ հայը պարապել է եր-  
կրագործութեամբ, խաշարածու-  
թեամբ, արհեստով ու վաճառա-  
կանութեամբ, այդ ամեն պարապ-  
մունքների մէջ նա շահվել է կնոջ  
ամենագորեղ մասնակցութեամբ:  
Հայը մշակել է երկիրը, վարել է,  
ցանել կինը հնձել է, կասել, ցորեն  
հաւաքել, խարբալել: Հայը խաշ-  
ներ և հօտեր է արածացրել կի-

նը կթել է նոցա և նրանց կա-  
թից պանիր, սեր, իւղ և չորա-  
թան շինել ու ապահովել իր որ-  
դոց պաշարը մի ամբողջ տարուայ  
համար: Հայը խուզել է իր ոչ-  
խարճերը, հայուհին բուրդ է գը-  
զել, մանել, հինել, հիւսել, կրթել  
ու գործուածներ շինել: Հայը  
վաճառականութիւն է սկսել, հա-  
յուհին բուրդի ու մետաքսի ապ-  
րանքներ է պատրաստել իր ա-  
մուսնի վաճառաշահութեան հա-  
մար: Հայը որ և իցէ արհեստով  
է պարապել մուրճ ու խարտոցը  
ձեռին, հայուհին աւելի արդիւնա-  
բեր արհեստով է պարապել իլի-  
կը, ճագ ու ճախարակը պտտնե-  
լով: Հայը վերջապէս ամեն երե-  
կոյ որդիքը շուրջը հաւաքած սագ-  
մոս է կարգացել, հայուհին նոցա  
քնացնելիս «եկեցէ» է ասել:  
Մէկ խօսքով ամեն տեսակ գոր-  
ծունեութեան մէջ, հայուհին ոչ  
միայն չէ համաձայնվել յետ մնալ  
տղամարդից, այլ ևս կարծես նա

սեցու հետ: Ես էլ այդ խօսակցութեան մէջ ըն-  
կայ և կամաց կամաց մեր խօսակցութիւնը եկաւ  
Ղարսից խօսակցութեան կէտերի վրա:  
Խմբագրի հարցախօսութիւններից և պ. դար-  
քիլիսեցու պատմածից հետոյ կըրակացութիւնը  
զուրս եկաւ. այսինքն Ղարսից խօսակցութեան  
պատմաւոր, 100 տունը (մի երկու երեք  
տուն հարուստները այս հաշի մէջ չեն) հազիւ  
հազ ծայրը ծայրին հասցնում և իրանց գերդաս-  
տանը հազիւ հազ կառավարում են: Բնացեալ 140  
տունը մինչև կողմը պարտքերի մէջ խրված են:  
240 տան վրա, որից տարեկան քանաձայնապա-  
կան արդիւնք հազիւ հազ կը գոյանայ 600 ռուբլի,  
այժմ պատրաստի կայ երկու քանանայ, որոնցից  
մէկը գրի սեն ու սպիտակ հազիւ ջոկում է:  
Գեռ այս բաւական չէ, մի տիրացու էլ մի քա-  
նի հարկը գրպանը դրել պատրաստվում է այ-  
սօր կամ վաղը ձեռնադրվելու: Ուրեմն կը լինեն  
երեք քանանայ, խրաքանչիւրի տարեկան առձիւր  
կը լինի 150—200 ռ. (տարին գիտէ): Մի վարդ,  
այն էլ քանանայ 200 ռուբլիով ինչպէս պիտի կա-  
ռավարէ իր 10—15 անձիւններից, (որոնցից ոչ  
մէկը աշխատող չեն) կազմած գերդաստանը Այս  
վերջին քանանայացու տիրացուն ու միայն հասարակ  
ուսում չէ աւել, այլ մինչև ներկայ տարուս նո-  
յիմերի վերջն էլ դաստիարակութիւն էր անում:  
Զարմանալի երևոյթներ ենք տեսնում աշխարհում.  
երկէ դաստ, այսօր քանանայ. երկէ այժմ էր մոր-  
թում, այսօր պատարագ է մատուցանում, երկէ  
զլաւ միս, լաւ միս էր բզաւում, այսօր անմահ  
պատարագի առաջ կանգնած, զառէք, կերէք, այս  
է մարմին իմ...» է աղաղակում.— 240 տուն, 2  
ջահիլ քանանայ շատ հեշտութեամբ կը կառավար-  
են, ուրեմն երրորդն էլ ձեռնադրել տալու ինչ  
հարկ կայ: Ուրիշ բաներում չը գիտեմ, միայն այս  
բանում զարաբխիտեցող անասկանցողութիւնը շատ  
պարզ փայտում է: Ափսոս, նամակս երկարանում  
է և գրելքս չէ վերջանում: Փետրվարի վերջերում  
ես դարձեալ Ղարսից եկել եմ և պակասե-  
րը կը լրացնեմ.— 25-ին դուրս եկայ Ղարսից ի-  
սկը և ուղեորվեցայ զէպի Թիֆլիս:  
Խ. Փ. Գ.